Ardshinbank

MOBILE BANKING

Ֆիզիկական անձ օգտվողի առցանց գրանցման ուղեցույց

Մենք ուժեղ ենք միասին

Առաջին մուտք Mobile banking հավելված

Հարգելի հաճախորդ,

- Այսուհետ դուք կարող եք առցանց գրանցել «Մոբայլ բանկ» համակարգի օգատգործող և ստանաք Ձեր հաշիվների, քարտերի, վարկերի և ավանդների վերաբերյալ տեղեկատվությունները դիտելու հնարավորություն:

- Առցանց գրանցվելու համար անհրաժեշտ է ունենալ գործող վճարային քարտ և նույնականացում անցնել այդ քարտին կցված հեռախոսահամարի և էլեկտրոնային հասցեին ուղարկվող նամակի միջոցով:

- Առցանց օգտագործող գրանցելու համար անհրաժեշտ է կատարել քայլերի հետևյալ հաջորդականությունը:

Հավելվածի տեղադրում

Հավելվածը կարող եք ներբեռնել համապատասխանաբար Apple store-ից (IOS-համակարգ) կամ Play market-ից (Android համակարգ):

- App store-ի կամ Play market-ի փնտրման տիրույթում անհրաժեշտ է մուտքագրել Ardshinbank անվանումը, ինչից հետո որոնման արդյունքում կհայտնվի Ardshinbank (mobile banking) հավելվածը:
- Տեղադրեք հավելվածը:





Հավելվածի տեղադրում

Սպասեք տեղադրման ավարտին և համոզվեք, որ հավելվածը հայտնվել է Ձեր հեռախոսի էկրանին:

Ardshinbank

Մենք ուժեղ ենք միասին

www.ardshinbank.am, +374 12 22 22 22

Ֆիզիկական անձ օգտվողի առցանց գրանցում

- Առցանց օգտագործող գրանցելու համար անհրաժեշտ է սեղմել «Գրանցում» կոճակը:
- Գրանցումից հետո Դուք կկարողանաք դիտել Ձեր հաշիվների, քարտերի, վարկերի և ավանդների վերաբերյալ տեղեկատվություններն առանց գործարք կատարելու հնարավորության:
- Առցանց գրանցվելու համար անհրաժեշտ է ունենալ գործող վճարային քարտ և նույնականացում անցնել այդ քարտին կցված հեռախոսահամարի և էլեկտրոնային հասցեին ուղարկվող նամակի միջոցով: (Այդ տվյալները Դուք ներկայացրել եք Բանկ վճարային քարտի դիմումի լրացման ժամանակ կամ առանձին հայտով տվյալների փոփոխման դիմումով):



Ֆիզիկական անձ օգտվողի առցանց գրանցում

- Առցանք օգտագործող գրանցելու համար համապատասխան դաշտում մուտքագրեք Ձեր քարտի դիմերեսի 16–անիշ համարը:
- Հավելվածը Ձեզ հնարավորություն է ընձեռում նաև քարտի 16-անիշ համարը իդենտիֆիկացնել հեռախոսի տեսախցիկի միջոցով՝ սեղմելով 📷 կոճակը:
- Մուտքագրումը հնարավոր է իրականացնել միայն գործող կարգավիճակով քարտերի միջոցով:
- Ընտրեք ☐ «սույնով ներկայացնում եմ ֆիզիկական անձի Ardshinbank I-banking համակարգից օգտվելու առցանց ներկայացվող դիմում-առաջարկը»՝ նախապես ծանոթանալով հղմամբ ներկայացվող պայմաններին:
- Այնուհետև սեղմեք «Հաստատել» կոճակը:

Ֆիզիկական անձ օգտվողի առցանց գրանցում

- Եթե ներմուծված քարտի տվյալներով համակարգում օգտագործող արդեն առկա է, կամ եթե տվյալ քարտին կցված չէ հեռախոսահամար կամ էլեկտրոնային հասցե, համակարգը դրա մասին կզգուշացնի:

- Հավելվածի մյուս էջում անհրաժեշտ է մուտքագրել Ձեր հեռախոսահամարը, որը Դուք ներկայացրել եք Բանկ վճարային քարտի տրամադրման ժամանակ, և սեղմել «Հաստատել» կոճակը:



Ֆիզիկական անձ օգտվողի առցանց գրանցում

- Համակարգը Ձեր հեռախոսահամարին կուղարկի SMS կոդ, որն անհրաժեշտ է մուտքագրել համապատասխան դաշտում, և սեղմել Ok կոճակը:

- Ընդ որում, եթե մուտքագրած հեռախոսահամարը չհամապատասխանի Ձեր վճարային քարտին կցված հեռախոսահամարին, համակարգը կզգուշացնի Ձեզ դրա մասին:



Ֆիզիկական անձ օգտվողի առցանց գրանցում

- Նույնականացման գործընթացը ավարտելուց հետո, համակարգը կտեղեկացնի Ձեզ առցանց օգտագործողի գրանցման հաջողությամբ իրականացնելու մասին, որից հետո
- Ձեր էլեկտրոնային հասցեին կուղարկվի նամակ օգտագործողի անվամբ և հղում հավելված առաջին մուտք իրականացնելու ուղեցույցին,
- Ձեր Հեռախոսահամարին կուղարկվի գաղտնաբառ:



Առաջին մուտք Mobile banking հավելված

- Առաջին անգամ Mobile banking համակարգ մուտք գործելու համար անհրաժեշտ է համապատասխան տիրույթներում մուտքագրել Ձեր օգտվողի անունը, որը Ձեզ ուղարկվել է էլ. փոստով և Ձեր հեռախոսահամարին ուղարկված գաղտնաբառը:

- Այս գաղտնաբառը մեկանգամյա է և ենթակա է փոփոխման:

Լրացվում է Ձեր օգտվողի անունը, որը ուղարկվել է Ձեր էլ.փոստին

Լրացվում է մեկանգամյա գաղտնաբառը, որը sms հաղորդագրությամբ ուղարկվել է Ձեզ



Առաջին մուտք Mobile banking հավելված

SMS հաղորդագրությամբ ուղարկված մեկանգամյա գաղտնաբառ

Նոր

Նոր



- Համակարգը կպահանջի փոփոխել կարճ հաղորդագրությամբ ստացած SMS գաղտանաբառը նոր գաղտնաբառով:
- Մուտքագրեք կարճ հաղորդագրությամբ ստացած գաղտանաբառը, հաստատեք այն երկրորդ մուտքագրմամբ և ***մտապահեք այն***:

Առաջին մուտք Mobile banking հավելված

- Այդ պահին համակարգը Ձեր ինքնությունը հաստատելու համար Ձեր հեռախոսահամարին կուղարկվի SMS կոդ, որը պետք է մուտքագրել համապատասխան դաշտում և դրանով հաստատեք գաղտնաբառի փոփոխությունը:

Այս կոդը Ձեր գաղտնաբառը չէ

Առաջին մուտք Mobile banking հավելված

- Այնուհետև համակարգը կպահանջի մուտքագրել նոր 5 նիշից կազմված թվային անցակոդ և հաստատել այն կրկին մուտքագրումով: Այս անցակոդը ևս պետք է **մտապահել:**

- Այսուհետ հավելված մուտք գործելիս, եթե օգտագործողից ելք չի կատարված(log out), համակարգը կպահանջի միայն այդ թվային գաղտնաբառը:

- Ընդ որում հավելվածից օգտվելիս Դուք կարող եք ակտիվացնել հեռախոսի touch ID/face ID-ով նույնականացման գործիքը և թվային գաղտնաբառի փոխարեն կիրառեք այն:

Առաջին մուտք Mobile banking հավելված

- Touch ID/face ID-ով նույնականացման գործիքը թվային գաղտնաբառի փոխարեն կիրառելու համար անհրաժեշտ է համոզվել, որ հեռախոսը ունի տվյալ տեխնիկական հնարավորությունը և որ այն ակտիվացված է:

- Համոզվելուց հետո հավելվածի ***Կարգավորումներ*** պատուհանում անհրաժեշտ է ***Ակտիվացնել մատնահետքը***՝ կոճակն աջ տեղաշարժելով:

- Տվյալ գործողությամբ ակտիվանում է ինչպես touch ID-ին, այնպես էլ Face ID-ին:

- Ընդ որում եթե այդ հնարավորությունը հեռախոսի վրա ակտիվացված է՝ համակարգը հավելված մուտք գործելու պահին ինքնաշխատ թույլատվություն է հարցնում ծրագրում Touch ID-ին/ Face ID-ին կիրառելու համար:



Առաջին մուտք Mobile banking հավելված

Հարգելի՛ հաճախորդ, Գաղտնաբառի և թվային անցակոդի նման համակարգը ստեղծված է Ձեր անվտանգությունն ապահովելու համար:

Հետևեք անվտանգության կանոններին

- *Մի՛ հայտնեք Ձեր թվային կոդը և գաղտնաբառը երրորդ անձանց*
- *Հեռախոսը կորցնելու դեպքում դիմեք Բանկ և կասեցրեք ծառայությունը:*

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Օնլայն/Մոբայլ բանկինգի միջոցով կատարվող գործարքների անվտանգությունը և փոխանցվող տեղեկատվության գաղտնիությունն ապահովելու համար համակարգում **ներդրված են միջազգային առաջադեմ անվտանգության պաշտպանիչ համակարգեր**, ինչպես նաև **էլեկտրոնային ստորագրության մեխանիզմը**, որն ապահովում է հաճախորդի և նրա կողմից տրված հանձնարարականների նույնականացման անհրաժեշտ մակարդակը:

Ardshinbank I-Banking համակարգի սպասարկման պայմաններ ֆիզիկական անձանց համար

Բանկային ծառայությունների մատուցման ընդհանուր պայմաններ

Գործարքներ կատարելու իրավասության ակտիվացում

Փոփոխության առցանց հայտ

*Դուք հնարավորություն ունեք փոխել ծառայություններից օգտվելու եղանակը և **Դիտման իրավասությունից** անցնել նաև **Գործարքներ կատարելու իրավասության**՝ առանց Բանկ այցելելու:*



Փոփոխության առցանց հայտ

ՕԳՏՎՈՂԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ բաժնից ուղարկեք հայտը կցելով՝

1. Ձեր ID քարտի կամ անձնագրի լուսանկարը

2. Ձեր ինքնանկարը՝ ID քարտը կամ անձնագիրը ձեռքում





Փոփոխության առցանց հայտ

- *Բանկի աշխատակիցը կզանգահարի և կնույնականացնի Ձեզ*

- *Ապա Արդշինբանկում գրանցված Ձեր հեռախոսահամարին կստանաք կարճ հաղորդագրություն կարգավիճակի փոփոխության վերաբերյալ:*

Վերջ, Մոբայլ Բանկինգ հավելվածն արդեն հասանելի է:



Շնորհակալություն մեր ծառայություններից օգտվելու համար

Ardshinbank

Մենք ուժեղ ենք միասին

www.ardshinbank.am, +374 12 22 22 22

EUROMONEY AWARDS FOR EXCELLENCE 2020